

## ԱԼՂՈ ՖԵՐՐԱՐԻ

### ՐԱՖՖԻՆ ԵՎ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՅ ԱԶԽԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ: ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԱԶԽԱԿԱՍՈՒԹՅԱԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱԸ ՇՈՒՐՁ

Թեև հնադարյան և միջնադարյան հայ ազնվականության ծագումն ու կառուցվածքը խորապես ուսումնասիրված են<sup>1</sup>, դեռևս մեծ աշխատանք կա տաճելու արդի ժամանակներում այս հասարակական դասի գարգացնան շուրջ:

Մասնավորապես Արևմուտքում, գիտնականները մեծապես անտեսել են այս նյութը: Այնուամենայնիվ, կարևոր բացառություն են Կիրիլ Թումանովը և Ռոբերտ Ջյուսենը, ովքեր անմնացորդ նվիրվել են արդի ժամանակների հայ ազնվականության մանրակրկիտ ուսումնասիրմանը, սակայն նրանց աշխատանքները գլխավորապես ծագումնարանական բնույթի են: Ինչ վերաբերում է Խորհրդային Հայաստանին, այդ ժամանակաշրջանում նշված ոլորտի նկատմանը պատճական հետաքրքրությունը զգալիորեն տուժեց այն գաղափարախոսական պայմանավորումից, որը ստիպում էր ազնվականությունը դիտարկել որպես

<sup>1</sup> Տես **Հ. Ածոնց**, Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя, Санкт-Петербург 1908 (Armenia in the Period of Justinian, translated with partial revisions, a bibliographical note and appendices by N. Garsoian, Lisboa 1970), **Ք. Մանամյան**, Ֆեոդալիզմը հին Հայաստանում: Արշակունիների և մարզպանության շրջան, Երևան 1934; **E. Kherumian**, Esquisse d'une féodalité oubliée, in "Vostan. Cahiers d'histoire et de civilisations arménienne", 1948-1949, n. 1, էջ 7-56; **Ա. Գ. Ծոկասյան**, Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма, Ереван, 1963; **C. Toumanoff**, Studies in Christian Caucasian History, Georgetown 1963; idem, Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucاسie chrétienne, Roma 1976; **Ս. Կրկյաշերյան**, Նախարարներն ու նախարարությունները Հին Հայաստանում, «Լրաբեր հաս. գիտ.», 1978, 10, էջ 60-75; **C. Toumanoff**, Les dinasties de la Caucasia chrétienne de l'Antiquité jusqu'au XIX siècle. Tables généalogiques et chronologiques, Roma 1990; **Գ. Մովսես Խորենացու** նախարարական տոհմերի ցանկը, «Պատմա-բանասիրական հանդես», 1987, 3, էջ 73-70:

շահագործող դասակարգ՝ «ավատատիրական» հասարակարգի կուռ կաղապարի շրջանակում:

Դաշվի առնելով Վերոհիշյալը՝ չափազանցություն չի լինի ասել, որ արդի ժամանակների ազնվականության ուսումնասիրությունը խոստանում է լինել շատ արգասարեր: Նախ և առաջ, ըստ իս, այն կարող է նվազեցնել հայ ժողովրդի կերպարի նույնացումը վաճառականի և աշխարհաքաղաքացու կերպարի հետ, որը չի հանապատասխանում հայերի հասարակական ընդհանուր կառուցվածքին նույնիսկ ազգային թագավորությունների անկումից հետո: Որքան էլ որ հայ վաճառականները մեծ դեր ունենային ԺԶ-ԺԸ (XVII-XVIII) դարերի համաշխարհային առևտուրի մեջ, այն ընդգրկում էր փոքրաթիվ և սփոված հատվածն այս ժողովրդի, որի գերակշիռ մեծամասնությունը կապված մնաց հայրենի երկրին: Ժամանակակից գիտնականներից մեկը նկատում է, որ «...հայերի առևտրական կարողությունների կարծրատիպերը ստվեր են նետում անցյալում այս ժողովրդի ծեռքբերումների վրա որպես ռազմիկներ, որոնք ծառայել են ոչ միայն հայրենի իշխանական տներին, այլև հռոմեական, սասանյան և բյուզանդական կայսրություններին»<sup>1</sup>: Դանդաղություն չի լինի ասել, որ այս չափազանցված ուշադրությունը սփյուռքային և առևտրական տեսանկյունից գրեթե համպատասխանում է «ընչաքաղցության և վախկութության» բացասական հատկանիշներին, որոնք արդի ժամանակներում հաճախ վերագրվում են հայերին<sup>2</sup>:

Նման կարծրացած նախակերպարն, իրոք, զարմանք է առաջացնում, եթե հիշենք այս ժողովրդի անցյալում վայելած հեղինակությունը: Օրինակ, հնադարյան քրիստոնեական ավանդույթի հանրահայտ պատմիչ Փիթեր Բրաունը նշում է, որ «...ինչպես շվեյցարացի Landesknechten կամ նոր ժամանակների շոտլանդացի Highlanders (լեռնականներ), այնպես էլ հայերը մեծ հռչակ էին վայելում երկու կայսրությունների

<sup>1</sup> R. G. Krikorian, From swords to plowshares...back to swords: the Reconstruction of Armenian Martial Identity, "The Annual of the Society for the Study of Caucasia", (6-7) 1994-1996, էջ 29:

<sup>2</sup> Այս թեմայի շուրջ տես R. G. Suny, Images of Armenians in Russian Empire, in R. G. Hovannisian (ed.), The Armenian Image in History and Literature, Malibu (Ca.), էջ 105-137 և A. Ferrari, L'eroe, il mercante, il sovversivo: figure dell'Armeno nella cultura russa prerivoluzionaria, in A. Pavan, G. Giraldo (a cura di), Le minoranze come oggetto di satira, I, Padova 2001, էջ 180-188:

(բյուզանդական և պարսկական) թանակներում: Նրանք սերում էին մի մշակույթից, որը ծնուն էր հերոսներ»<sup>1</sup>: Այս հնամենի վարկը սերտորեն կապված էր հայ ազնվականության հետ, որի մտավոր կառուցվածքը հիմնավոր նշանակություն էր տալիս ռազմական արժեքներին: «Ընչաքաղոցության և վախկոտության» հիմքն իրականում կարող է առաջացած լինել ազնվական տների գրեթե ամբողջական ոչնչացումից հետո, որը մարմնավորում էր հայերի ռազմական առաքինությունները, և նրանց մեջ նոր առևտրական կամ տնտեսական վերաբերմունքի ի հայտ գալով, որն այս ժողովրդին հայտնի դարձրեց ողջ աշխարհում, որոնք, սակայն, ոչ միշտ վայելեցին սեր ու հարգանք: Միգուց պատահական չէ, որ հայերը շարունակեցին ցուցաբերել երեմնի ռազմական առաքինությունները գլխավորապես այնտեղ, (ինչպես Զեյթունում կամ Արևելյան Հայաստանի մի քանի շրջաններում), որտեղ զանազան պատճառներով ազգի ազնվականությունը կարող էր վերապրած լինել, պահպանելով թե՛ ավանդական ռազմիկի խառնվածքը և թե՛ առաջնորդելու կարողությունը:

Այս ամենից զատ, կարծում եմ, որ արդի ժամանակաշրջանի հայ ազնվականության նոր և ոչ լոկ ժագումնաբանական ուսումնասիրությունը լայնորեն կխորացնի մեր գիտելիքը հայ ժողովրդի ընդհանուր պատճության շուրջ:

Անձանք մի քանի տարի առաջ սկսեցի զբաղվել Անդրկովկասի հայ ազնվականությամբ, թարգմանելով Վենետիկում Միհիթարյան միաբան Ղուկաս Սեբաստացու կողմից մոտավորապես 1737 թվականին խմբագրված Ղավիթ Բեկի ապստամբության ժը դարի ժամանակագրությունը<sup>2</sup>, իմ հերթին այս նյութին նվիրելով մի քանի ներածական հոդվածներ<sup>3</sup>: Սույն թեմայի վրա աշխատելով, բնականաբար բախվեցի

<sup>1</sup> P. Brown, *The Rise of the Western Christendom. Triumph and Diversity. AD 200-1000*, Cambridge (Ma.), 1996, էջ 169:

<sup>2</sup> Le guerre di Dawit' Bēk, un eroe armeno del XVIII secolo (Աերածություն, թարգմանություն և մեկնաբանություններ), Milano 1997:

<sup>3</sup> Nobility and Monarchy in Eighteenth Century Armenia. Introduction to a New Study, «Iran & the Caucasus: Research Papers from the Caucasia Centre for the Iranian Studies», Երևան-Լայնեն, Brill, 2004, 8. 1, էջ 53-63 [Լույս է ընծայվել նաև. Armenian Studies Today and Development Perspectives. International Congress, Yerevan, September 15-20, 2003. Collection of Papers, Erevan 2004, էջ 329-333] և Սենք մեծ Հայաստանեցւ իշխաններս և մելիքներս. Introduzione allo studio della nobiltà armena in Transcaucasia nel XVIII secolo, in V.

Ղարաբաղի մելիքներին նվիրված Շաֆֆու հայտնի աշխատությանը, և նպատակահարմար գտա պատրաստել դրա իտալերեն թարգմանությունը, առաջինը արևմտյան լեզվով, որը լույս կտեսնի հետագա ամիսների ընթացքում:

## ՐԱՖՖԻՆ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԵԼԻՔՆԵՐԸ

Հայտնի հայ գրողի այս աշխատությունը սերտորեն կապված է այն բազում պատմական վեպերին, որոնք կազմում են Շաֆֆու ստեղծագործության ամենանշանակալի մասը: Պատմավեպի ժամրին դիմելը ծառայեց, ըստ Արովյանի մեծ դասի, որպես առանձնաշնորհյալ միջոց ազգային ինքնության և հայրենասիրության դասեր քաղելու համար: Այնպիսի վեպերում ինչպիսիք են Զալալերդին (1877), Խեմքը (1880), Դավիթ Բեկ (1881-1882), Կայսեր (1883-1887), Սամվել (1888) և Պարույր Շայկազն (1894, Ետմահու) Շաֆֆին նկարագրում է նոր մարդկանց, զերծ անցյալի նախապաշտումներից ու համակամությունից, որոնց մեջ առատորեն մեղադրվում էր Հայ Եկեղեցու քարոզչությունն այն համոզումով, որ ազատագրման միակ ուղին գինված դիմադրությունն է, որին սակայն պետք է նախորդեր ժողովրդի մեջ համբերատար պրոպագանդան: Ազդեցությունն այս պատմավեպերի, որոնց միջոցով Շաֆֆին մղում էր իր հայրենակիցներին ազատագրական շարժման, գործելու նաև գենքը բռունքըների մեջ, առանց սպասելու դրսից փրկության, իրոք նշանակալից եղավ հայ հասարակության վրա այնպիսի ժամանակաշրջանում, երբ այն տեսնում էր առաջին շոշափելի քայլերն այդ ուղղությամբ: Այս իմաստով Շաֆֆին դարի ամենից ներկայանալի և ազդեցիկ հայ գրողն էր, որը մարմնավորում էր իր ժողովրդի ազգային և միկնույն ժամանակ հասարակական ծգտումները<sup>1</sup>:

Սակայն այսօրվա նյութս ոչ թե գրական, այլ պատմագրական բնույթի է: Խամսայի մելիքությունները. 1600-1827 աշխատությունն, իրոք, նշված ժամանակաշրջանի Ղարաբաղի և հատկապես նրա

Calzolari, A. Sirinian, B. L. Zeklyan (a cura di), Dall'Italia e dall'Armenia. Studi in onore di Gabriella Uluhogian, Dipartimento di Paleografia e Medievistica, Università di Bologna, Bologna 2004, էջ 181-205:

<sup>1</sup> Stev L. Nalbandian, The Armenian Revolutionary Movement, Berkeley 1967, էջ 57.

ազնվականության, այսպես կոչված *մելիքների*<sup>1</sup>, իսկական պատմությունն է: Արդեն *Դավիթ Բեկի* մեջ Ռաֆֆին շոշափել էր այդ թեման և, իրոք, այս երկու ստեղծագործությունները սերտորեն կապված են միմյանց նախ և առաջ ազգային ազնվականության հանդեպ ցուցաբերած հետաքրքրության և արդի հայոց պատմության մեջ նրա ունեցած դերի համար:

Ռաֆֆին կարողացել է իրականացնել այս պատկերը իիմնականում այն փաստի շնորհիվ, որ քաջատեղյակ էր *Դարաբաղի* մելիքների պատմությանը, որոնց մոռացության էր մատնել հայ հասարակությունն արդեն ժթ. դարի երկրորդ կեսին: Հենց ինքը՝ Ռաֆֆին հիշում է, որ

<sup>1</sup> Մելիքների մասին, բացի Ռաֆֆու միշտ արժեքավոր հանդիսացող գրքերից, չնայած որոշ անծգրությունների, (Խամսայի մելիքությունները. 1600-1827. Նիւթեր հայոց նոր պատմութեան համար, Թիֆլիս 1882, տպված նաև նույնի Երկերի ժողովածու, հ. IX, Երևան, 1987, էջ 417-625, որի ռուսերեն թարգմանությունը՝ (Գաղտնիք Դարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886) և Ա. Բեկնազարյանցի աշխատությունից, (Գաղտնիք Դարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886), ուշաղորդյան արժանի են նաև հետևյալ ուսումնասիրությունները և գրքերը: Առաքել Վարդապետ, Նիւթեր հայ մելիքութեան մասին. I պրակ. Դիզակի մելիքութիւնը. Վաղարշապատ 1913 և Կարապետ Եպիսկոպոս (Տէր Սինասեամ), Յայ մելիքութեան մասին. II պրակ. Դոփեանք և Մելիք-Ծահնազարեանք. Էջմիածին, 1914: Խորհրդային շրջանում մելիքության մասին գրված ոչ բազմաթիվ աշխատանքներից նշենք մի քանի հոդվածներ. Ս. Քարխուդարյան, Գեղարքունիքի մելիքներու ու տանութերերը ըստ Տարկի վանքի մի փաստաթղթի, «Քանրեր Մատենադարանի» 8 (1967), էջ 191-227, Յ. Փափաջյան, Մելիք Եգանի ընդունարանի վիճակի արձանագրությունը, «Լրաբեր հաս. գիտ.» 1985, ո 5, էջ 75-78 և Ս. Սարգսյան, Մելիքական բնակելի համկառուց Տող ավանում, «Պատմա-բանասիրական համդես», 1987, 3, էջ 132-140. Վերջերս լույս տեսած գրքերից նշենք. Ա. Լուսան, Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, 2001, և Ա. Մաղամանի հոդվածները. Գյուլհստան գավառի տիրակալ Մելիք-Բեգլարյանի տոհմածառը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», 2003, 1-2, էջ 11-14, Զրաբերդի գավառի տիրական Մելիք-Խորայի տոհմածառը. «Հայոց Պատմության հարցեր», 4, 2003, էջ 36-40, Արցախի Գյուլհստան գավառի տիրական Մելիք-Բեգլարեանների Հնկաստանի ճյուղը. «Հանդէս ամսորեայ», 2004 (1-12), էջ 475-491, Արցախի Գյուլհստան, Զրաբերդի և Դիզակի գավառների մելիքական տների տոհմածառերը, «Բազմավէպ», 2004, էջ 93-121. Արևմտյան հայագետներից այս թեմային անդրադարձել է Ռ. Ջյուտենը իր մի քանի հոդվածներում. R. Héwson, The Meliks of Eastern Armenia: A Preliminär Study, «Revue des Etudes Arménien», 1972, ո. 9, էջ 285-329; The Meliks of Eastern Armenia II, 1973-74, ո. 10, 282-300; The Meliks of Eastern Armenia III, 1975-76, ո. 12, էջ 219-243; The Meliks of Eastern Armenia IV, XIV (1980), pp. 459-470; Three Armenian Noble Families of the Russian Empire [The Meliks of Eastern Armenia V], «Հասկ», 1981-1982, էջ 389-400; The Meliks of Eastern Armenia VI: the House of Aghamaleanc', «Բազմավէպ», 1984, էջ 319-333:

մինչ 1882 թվականին իր աշխատանքը կամաց-կամաց լույս էր տեսնում Թիֆլիսի «Մշակ» օրաթերթի համարներում, ծանոթները նրան հանդիպելիս ասում էին՝ «Լավ է», բայց ապա հետևում էր հարցը. «Որտեղից ես քաղել այդ տեղեկությունները... Այս հարցի մեջ, որ ինձ հաճախ էր ուղղվում, զգացվում էր մի տեսակ կասկած, անվստահություն... ծանոթներից ոմանք նույնիսկ հարցնում էին: ... Եթե իրոք ունեցել ենք Ղարաբաղի այդ իշխանապետությունները, ինչու՞ չգիտեինք այդ մասին...»:

Այս աշխատության հրատարակությունից հետո մինչեղու Ղարաբաղի մելիքների պատմությունը վերջնականապես հայերի, հատկապես արևելահայերի, ազգային հիշողության մաս կազմեց: Ի դեպ, մի քանի տարի անց (1886) Պետերբուրգում հրատարակվեց մեկ այլ եզակի աշխատություն, որը շոշափում էր գրեթե նույն նյութերը: Խոսքը վարդապետ Մակար Բարիխուդարյանի արդի հայերեն թարգմանությամբ Գաղտնիք Ղարաբաղի հատորյակի մասին է, որի գրաբար բնօրինակը ենթադրվում է, որ գրվել է ոմն Ապրես Բեկնազարյանցի կողմից: Այն հիմնականում նվիրված է շրջանի ազնվական ընտանիքների տոհմաբանությամբ, որի ստույգ լինելուն թերահավատությամբ են վերաբերվել շատերը, այդ թվում և Ռաֆֆին:

Խամսայի մելիքությունները աշխատությամբ Ռաֆֆին ձգտել է վերականգնել արդի հայ պատմության կարևոր էջերից մեկը: Եւ ոչ թե սոսկ ուսայալ ոգու մղումով, այլ քաղաքական և մշակութային այնպիսի ծրագրի շրջանակում, որն ուղղված է ժամանակակից հայ ժողովրդի հաստատմանը. մի ժողովրդի, որն իրազեկ է իր անցյալին, բայց միաժամանակ միտված է ապագայի կերտմանը: Այս աշխատությունն, ուստի, պետք է ընթանալ Ռաֆֆու գաղափարական կողմնորոշման լույսի ներքո: Նա համոզված էր, որ Յայաստանի քաղաքական վերածունդը կարող էր տեղի ունենալ ոչ թե մեծ տերությունների (և ոչ իսկ Ռուսաստանի) միջամտությամբ, այլ միայն իր ժողովրդի ինքնուրույն գործողությունների շնորհիվ, որոնք նախ և առաջ պետք է հիմնված լինեն կրթության ընդարձակ գործունեության, ինչպես նաև ինքնապաշտպանության գործուն զարգացման վրա: Այս առումով Ղարաբաղի մելիքները, որոնք պահպանվեցին ժ. (XVIII) դարի ողջ ընթացքին և մասամբ ժմ. (XIX) դարի առաջին տարիներին, իրենց ռազմական և ժողովրդին առաջնորդելու ունակությամբ կազմում են արտասովոր հետաքրքրության ուսումնասիրության առարկա: Բացի դրանից,

ինչպես Երևում է նրա ազգանունից (Մելիք-Շակոբյան), Ռաֆֆին սերում էր արևելահայ ազնվականական այս ընտանիքներից մեկից<sup>1</sup>:

Այս բոլոր գործոնները նրան մղեցին ձեռնարկելու երկար հետազոտություն այդ թնագավառում մի ճանապարհորդությամբ, որը սկիզբ առավ 1881 թվականի հուլիսի վերջին Թիֆլիսից, որտեղ Ռաֆֆին թնակվում էր ինչպես ռուսական կայսրության հայ մտավորականության մեջ մասը: Դեպի Ղարաբաղ կատարած այս ճամփորդությունը տևեց երկու ամիս, որի ընթացքում Ռաֆֆին հյուրընկալվեց մենաստաններում և ընտանիքներում: Նրան երբեմն ընդունում էին հյուրասեր կերպով, երբեմն էլ մեծ անվստահությամբ, ինչպես ինքն է պատմում Խամսայի մելիքությունների վերջում: Այս ամենի արդյունքում գրողը հավաքեց զանազան փաստաթղթեր շրջանի մելիքությունների վերաբերյալ. ծեռագրեր, արձանագրություններ, հիշատակարաններ, տոհմածառեր և բերանացի պատմություններ: Դետագա ամիսներին ուսումնասիրեց այս նյութերը, և 1882 թվականի ընթացքում Խամսայի մելիքությունները հրատարակվում է Մշակի էջերում: Զուգահեռաբար, չնայած գրաքննության հետ ունեցած որոշ խնդիրներին, աշխատությունը լույս տեսավ նաև առանձին հատորով<sup>2</sup>, կրկին Թիֆլիսում, որտեղ վերատպվեց 1895 թվականին: Մշակի մեջ հրատարակման ընթացքում ընթերցողների մոտ ծագած որոշ հարցերին պատասխանելու նպատակով Ռաֆֆին աշխատության վերջում գետեղել էր գործածած աղբյուրների ցանկը, միաժամանակ խոստանալով, որ եթե նյութը լավ ընդունելություն գտներ, ապա մի երկրորդ հատոր էլ լույս կընծայեր, ներառելով այն բոլոր աղբյուրները, որոնց միջոցով կազմել էր առաջինը, և հրավիրելով ամենքին իրեն այլ նյութեր ուղարկել:

Թեև այդ երկրորդ հատորը երբեք լույս չտեսավ և ընդարձակ ու անմիջական հաջողություն գտնելու գրողի հույսը մասսամբ հիասքափություն ապրեց, այդուհանդերձ Ռաֆֆու այս աշխատությունն աննկատ չանցավ: Օրինակ, Արփիար Արփիարյանը ցանկություն էր հայտնել հրատարակել Արևելքի մեջ, սակայն գրաքննական պատճառներով ստիպված եղավ սահմանափակվել ծաղկաքաղերով, որոնք լույս տե-

<sup>1</sup> Տես R. Hewsen, The Meliks of Eastern Armenia: A Preliminary Study, էջ 308, ծ. 69:

<sup>2</sup> Ռաֆֆի, Երևան ժողովածու, հ. IX, Երևան, 1987, էջ 696:

սան 1884-1885 թվականերին թերթի զանազան համարներում: Այդ ժամանակաշրջանի հայ գիտնականները, ինչպես Հայկունին և Լեռն մեծապես գնահատեցին Խամսայի մելիքությունները, մինչդեռ առավել քննադատական եղավ Գալուստ Շիրմազանյանի դիրքորոշումը, ըստ որի ծայրաստիճան տեղի էր տրված թերանացի ավանդությանը, և, որը 1886 թ. Նոր դարի մեջ ընդգծեց որոշ անծառայություններ<sup>1</sup>:

Ինչ գնահատական կարելի է տալ այսօր Ռաֆֆու այս ուսումնասիրությանը: Պատասխանը կարող է որքան գրական, այնքան էլ պատմագրական բնույթի լինել: Սկսենք առաջին տեսանկյունից: Ըստ իս, խոսքն իրոք արժեքավոր ստեղծագործության մասին է, որի մեջ Ռաֆֆու պատմողական տաղանդը ներկա է առաջին էջից մինչև վերջինը, բայց միևնույն ժամանակ առանց երկարաբանությունների, որոնք ընդհանրապես ծանրացնում են հաճախ վեպերը: Յուսով եմ, որ հայի և ռուսի օրինակով իտալացի ընթերցողը ևս այս առումով կկարողանա գնահատել արժեքը:

Պատմական տեսանկյունից ևս այս գործն ունի շատ արժանիքներ: Ինչպես վերջերս անդրադարձավ Ռուլանդ Ավետիսյանը, Խամսայի մելիքություններով և Ապրես Բեկնազարյանցի վերոհիշյալ Գաղտնիք Ղարաբաղի գրքին նվիրված իր մեջ հոդվածով, որի գեղարվեստական արժեքն ընդունելով, այնուամենայնիվ, ցույց է տալիս պատմական անհին լինելը<sup>2</sup>, Ռաֆֆին մեծ ավանդ ունի հետագա արևելահայ պատմագրության մեջ, հատկապես այն ամենին ինչը վերաբերում է լեզվի գործածությանը<sup>3</sup>: Իրոք անհրաժեշտ է հիշել, որ մինչ այդ ռուսական կայսրության մեջ պատմական աշխատություններ լուս չեն տեսել հայերեն լեզվով, բացառությամբ Ալեքսանդր Երիցյանցի (1801-1902) Ներսես Աշտարակեցին գործից (Թիֆլիս 1877): Իրոք, այնպիսի արժեքավոր գիտնականներ, ինչպիսիք էին Մկրտիչ Էմինը (1815-1890), Քերովը Պատկանյանը (1833-1899), Գրիգոր Խալաթյանը (1858-1912) և Կարապետ Եզյանը (Գ. Ա. Եզյով, 1835-1905) իրենց պատմական գործերը գրում էին ռուսերեն լեզվով: Մի քանի տարվա ընթացքում

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 697-698:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 396-510:

<sup>3</sup> Տես Ռ. Ավետիսյան, Գրական լեզվամտածողությունը Ռաֆֆու գիտական խոսքում, «Պատմա-բանասիրական համես», 2003, 1, էջ 253-262:

իրավիճակը փոխվեց և լույս տեսան այնպիսի կարևոր գործեր, ինչպիսիք էին նույն Երիցյանցի Ամենայն Դայոց Կաթողիկոսությունը և Կովկասի Դայը Ժմ դարում, I-II, Թիֆլիս, 1894-1895, Ստեփանոս Բալասանյանի (1837-1889)՝ *Պատմություն հայոց*, սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1890, Գ. Աղանյանի փաստագրական ծանրաշուրջ հավաքածուները՝ Դիվան հայոց պատմության, Թիֆլիս, 1893-1915, Յ. Մանանյանի և Յ. Աճառյանի Դայոց նոր վկաները (Վաղարշապատ, 1903), Անտոն Կարակաչյանի Քննական պատմություն հայոց, ըստ նորագոյն պատմական, լեզուարանական և բանասիրական տեղեկութեանց, I-IV, Թիֆլիս 1880-1895, ծանրակշիռ աշխատությունը, մինչև այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Լեռն (Արաքել Բարախսանյան, 1860-1932) և հատկապես Նիկողայոս Ադոնցը (1875-1942), որն ի դեպ սկզբում գրում էր ռուսաց լեզվով, ապա ֆրանսերենով:

Խամսայի մելիքություններում տեղ գտած բանավոր և գրավոր փաստերի հավաքածուն իրոք նշանակալից է, ինչպես երևում է գրքի վերջում առկա աղբյուրների ցանկից: Դրանք դարձել են էլ ավելի արժեքավոր, քանի որ այդ աղբյուրներից շատերը, բնականաբար, բանավորները և ոչ միայն, կորստի են մատնվել, ուստի մեզ են փոխանցվել միայն Ռաֆֆու աշխատության շնորհիվ: Բացի դրանից, այնուամենայնիվ, հարկավոր է վերագրել այդ աշխատանքին նաև որոշակի թախնություն: Հնուտ պատմաբան չկանելով հանդերձ, Ռաֆֆին կարողացել է հավաքել և գործածել աղբյուրները էապես ճիշտ ձևով, թեև ոչ զերծ սխալներից, որոնցից ամենանշանակալին կարծես շրջանի մելիքական ազգատոհմերին Պարաբաղից դուրս ակունք վերագրելն է (բացառությամբ գլխավորից՝ Դասան-Զալայաններից), որոնց մինչդեռ հետագա ուսումնասիրությունները համարել այդ տեղանքից<sup>1</sup>:

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Այստեղ կցանկանայի շատ համառոտ կերպով ընդգծել այս աշխատության մի քանի գաղափարական կողմերը: Ըստ իս, Խամսայի մելիքությունների մեջ նախ և առաջ նկատվում է ոչ միայն ժամանակագրական, այլև գաղափարական որոշակի հեռավորություն նյութի և հեղինակի միջև: Ռաֆֆին ամբողջովին Ժմ. (XIX) դարի երկրորդ կեսի

<sup>1</sup> See R. Hewsen, The Meliks of Eastern Armenia: A Preliminary Study, էջ 319-324:

ժողովրդավար մարդ էր: Այս գաղափարական շրջանակը ոչ միշտ էր նրան թույլ տալիս ծշտորեն ըմբռնել, որ դեռևս մեկ դար առաջ մելիք-ները գործում էին քաղաքական և մշակութային հարազափերի հիման վրա, որտեղ էրնիկ և ազգային կողմը նվազ կարևոր էր տոհմային և կրոնական կողմերից: Այս տեսանկյունով էլ հավանաբար բացատրվում է Ռաֆֆու թերի հակակրանքը Վրացիների հանդեպ, որոնք Խամսայի մելիքությունների մեջ ներկայանում են որպես նվաստներ, անվստահելիներ և դավաճաններ: Իմ կարծիքով, Ռաֆֆու այս վերաբերմունքը էր նիկ անձնական հակակրանքից առավել անդրադարձնում էր Թիֆլիսի հայ և վրացի համայնքների փոխհարաբերությունների վատրարացումը, որը դարավոր դրական համագոյությունից հետո տեղի ունեցավ ժթ. (XIX) դարի վերջին տասնամյակների ընթացքում հասարակական-տնտեսական պատճառների հետևանքով:

Ռաֆֆու գաղափարախոսության մեկ այլ կարևոր կողմն է նրա հակաղերականությունը, որ Հովսեփ Եմինից մինչև Աբովյան քննադատում էր ոչ այնքան Հայ Եկեղեցին ինքնին կամ ավետարանական պատգամը, այլ ընչաքաղցությունը, հասարակական, մշակութային և քաղաքական պահպանողականությունը, իշխանությանը հնագանդվելու քարոզությունը, և մինչև իսկ ազգային հարցի դավաճանումը: Այս տեսադաշտում դրոշմած են այնպիսի Եկեղեցականներ, ինչպիսին էր Երից մանկանց վանքի կաթողիկոս Խորայելը, որոնք հանուն իշխանության տենչի դավաճանեցին իրենց ժողովրդի ազգային հարցը: ԺԸ. (XVIII) դարի վերջին տասնամյակներին հայ-ռուսական փոխհարաբերությունների մեջ կարևորագույն դեր խաղացած Արքեպիսկոպոս Հովսեփ Արդությանի հանդեպ Ռաֆֆին ունի երկգոր վերաբերմունք. գրողը նրան բազմիցս փառաբանում է իր հայրենասիրության, բայց քննադատում իր ծայրահեղ սահմանադրության համար (գլ. ԼԸ.): Մինչդեռ Ռաֆֆին մեծ խանդավառություն է ցուցաբերում վաճականների և քահանաների կերպարների հանդեպ, որոնք իրականացնում են կարևոր ռազմական ծեռնարկներ: Օրինակ, Ավագ Վարդապետը, որն առավել հայտնի է որպես Դալի-Սահրազա, որ թուրքերնից բարգնանյալ նշանակում է «խենթ վաճական»: Կամ այն Եկեղեցականները, որոնք մշակութային կամ քաղաքական ծառայություն մատուցեցին հայ ժողովրդին, ինչպես՝ արքեպիսկոպոս Բաղդասարը, որը վերջին սերունդն էր Աղվանքի կաթողիկոսի, և որին մինչդեռ մյուս աղբյուրները ներկայացնում են բացա-

սական լույսի ներքո իր թերի զարգացածության և ազգականներին առաջնություն տալու համար:

Զժխտելով հանդերձ այս կողմերը, Ռաֆֆին գնահատում է նրա վերակազմակերպման աշխույժ գործունեությունը, որ Եկեղեցուն, ուստի և հայ ժողովրդին վերադարձրեց օտարին անցած բազում սեփականություններ (գլ. ԽԲ.):

*Խամսայի մելիքությունների մեջ նկատելի է նաև բավականին բարդ վերաբերմունք մահմեդականների հանդեպ. Ռաֆֆին ընդգծում է, թե ինչպես հաճախ հայ մելիքներին հավատարմորեն նեցուկ էին կանգնում շրջանի մի քանի մահմեդական խանները (գլ. ՃԳ. -ԻԳ.): Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Ռաֆֆու կարծիքով շրջանի հայ և մահմեդական ժողովուրդների միջև փոխհարաբերությունները կարող են դրական լինել կրոնից դուրս, անձնական կապերի հիման վրա, մինչդեռ խլամը որպես այդպիսին միտված է կերպարանավորվելու որպես մոլեռանդ և ճնշչչ: Մյուս առօւմներով Ռաֆֆին հայ Եկեղեցուն չի վերապահում առանձնապես դրական վերաբերում: Իրոք, իր աշխարհիկ և ազգային տեսանկյունով Ռաֆֆին հակառակ էր քրիստոնեությանը, որովհետև այն չափազանց պասիվ էր, և մահմեդականությանը՝ որովհետև չափազանց հարձակողական էր<sup>1</sup>:*

Այժմ Ռուսաստանի հետ ունեցած փոխհարաբերության մասին: Ընդհանուր առնամք Ռաֆֆին ճանաչում է Ռուսաստանի ունեցած դրական դերը հայերի համար, սակայն մեղադրում է հաճախ Պետերբուրգին, որը գերապատվությունը տալիս է անվստահելի մահմեդական խաններին հայ հավատարիմ մելիքների փոխարեն, չհատուցելով այն զոհաբերությունները, որ հայերը արել էին հօգուտ Ռուսաստանի այդ պատերազմների ընթացքում: Միևնույն մեղադրանքն ուղղված է գորավար Մադաբովին, որի ռազմական ունակությունները փառաբանելի են, բայց նա, ծագումով հայ լինելով հանդերձ, անտարբերություն ցուցաբերեց իր ազգակիցների կարիքների նկատմամբ, մինչդեռ շատ ուշադիր է եղել իր անձնական շահերին (տե՛ս գլ. ԼԶ.):

<sup>1</sup> Տե՛ս K. B. Bardakjian, A Reference Guide to Modern Armenian Literature. 1500-1920, Detroit 2000,էջ 145:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Րաֆֆու միջոցով փոխանցված Ղարաբաղի մելիքների դեպքերն, առանձնահատուկ նշանակության են, թեև վերջնական արդյունքում ծախողվեցին անկախ քաղաքական ինքնություն վերակազմավորելու հայկական փորձերի առումով: Իրոք, խոսքը (Օսմանական Կայսրության մեջ Ձեյթունի դեպքի հետ միասին) ժամանակակից հայոց պատմության մեջ քաղաքական անկախության, ինչպես նաև գինված դիմադրության վերջին վայրի մասին է: Ուստի Ժ. (XVIII) դարի երկրորդ կեսին Ղարաբաղի մելիքների անկումը կարելի է համարել ոչ միայն հայ հին ազնվականության կարապի երգը, այլև հավանականության գրեթե բացառումը, որ իր քաղաքական և ռազմական կարողությունների հիման վրա Ղարաբաղը դառնար Պիեմոնտեի կամ Պրուսիայի հայկական տարբերակը, այսինքն ազգային քաղաքական անկախության միջուկ, որի շուրջ կառուցվեր ժամանակակից մի պետություն:

Չնայած իրենց դժբախտ վախճանին, նման դեպքերը նույնչափ զգալի նշանակություն ունեն ժամանակակից հայոց պատմության մեջ, որքան Րաֆֆու աշխատությունը, որին անդրադարձա այստեղ, մշակութային շրջանակում: